ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի №...-Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի հուլիսի 18-ի «Անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №273Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախա-կանության օգտագործման №1002 թույլտվությունը,

բ) ռադիոհաճախականության օգտագործման №1002 թույլտվության գործողու-թյան ժամկետը սահմանվել է մինչև 2022 թվականի հուլիսի 18-ը, և անհատ ձեռնարկատերն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով, ուստի թույլտվությունը 2022 թվականի հուլիսի 19-ից համարվում է դադարեցված,

գ) անհատ ձեռնարկատերը պատշաճ կարգով չի կատարել ռադիոհաճախա-կանության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2022 թվականի հուլիսի 18-ի դրությամբ կազմում է 1 046 912 (մեկ միլիոն քառասունվեց հազար ինը հարյուր տասներկու) դրամ, որից 60 135 (վաթսուն հազար հարյուր երեսունհինգ) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2018 թվականի մարտի 7-ը), 298 956 (երկու հարյուր իննսունութ հազար ինը հարյուր հիսունվեց) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2018 թվականի մարտի 8-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը) և 396 750 (երեք հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարի մասով

(հաշվարկված՝ 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը) առկա են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի համապատասխանաբար 2018 թվականի մարտի 7-ի №73Ա, 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №499Ա և 2021 թվականի մայիսի 5-ի №166Ա որոշումները, որոնք գտնվում են հարկադիր կատարման փուլում,

դ) 2021 թվականի մայիսի 6-ից մինչև 2022 թվականի հուլիսի 18-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման՝ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորութ-յունը կազմում է 291 071 (երկու հարյուր իննսունմեկ հազար յոթանասունմեկ) դրամ, որից 159 783 (հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր ութսուներեք) դրամը ռադիոհաճախա-կանության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 131 288 (հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր ութսունութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ, 17.1 հոդվածները, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2021 թվականի մայիսի 6-ից մինչև 2022 թվականի հուլիսի 18-ը հաշվարկված 291 071 (երկու հարյուր իննսունմեկ հազար յոթանա-սունմեկ) դրամ պարտքը, որից 159 783 (հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր ութսուներեք) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 131 288 (հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր ութսունութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում

որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

3. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2022թ.